

- Աճի տեմպը հունիսին 50 տոկոսով նվազել է՝ մայիսի 13.6 տոկոս ցուցանիշից իջնելով մինչև 6.8 տոկոսի (ՆՏՏՀ):
- Հունիսին արձանագրվել է գների աննշան անկում, ինչը հիմնականում պայմանավորված էր սննդամթերքի գների անկմամբ:
- Ապրանքների արտահանման աճի տեմպը կտրուկ դանդաղել է՝ թանկարժեք մետաղների արտահանման ծավալների անկման պատճառով:
- Պահուստներն ավելացել են՝ ապահովելով 4.3 ամսվա ներմուծման ծածկույթ:
- 2023 թ. 1-ին եռամսյակում գրանցվել է բյուջեի հավելուրդ 135 միլիարդ ՀՀ դրամի չափով՝ կանխատեսված 93 միլիարդ ՀՀ դրամ պակասուրդի համեմատ:
- Վարկերի և ավանդների ծավալները դանդաղ են աճել, իսկ ֆինանսական հատվածի ցուցանիշները մնացել են կայուն:

Հունիսին տնտեսական ակտիվության ինդեքսի (ՏԱԻ) աճի տեմպը կիսով չափ նվազել է՝ իրական արտահայտությամբ հասնելով 6.8 տոկոսի (ՆՏՏՀ)՝ մայիսի 13.6 տոկոսի համեմատ (ՆՏՏՀ): Սա հիմնականում պայմանավորված էր ոչ առևտրային ծառայությունների աճի տեմպի դանդաղմամբ, որը մայիսի 12.3 տոկոսի համեմատ հասել է 4 տոկոսի՝ հունիսին (ՆՏՏՀ). Դա պայմանավորված էր բարձր բազայի ազդեցությամբ (2022 թ. հունիսին աճը եղել է 36 տոկոս): Արդյունաբերական թողարկման ծավալների կրճատումը դանդաղման պատճառներից մեկն է՝ պայմանավորված հիմնականում հանքարդյունաբերության ոլորտի թողարկման ծավալների 15.6 տոկոս նվազմամբ (ՆՏՏՀ): Շինարարության և առևտրի ոլորտը շարունակել է կայուն աճել՝ համապատասխանաբար 18 և 20 տոկոսով (ՆՏՏՀ) (պատկեր 1): 2023 թ. Եռ.1-ում հանրագումարային աճը հասավ 11.4 տոկոսի (ՆՏՏՀ). աճի տեմպն ամենաբարձրն է եղել առևտրի ոլորտում (23.6 տոկոս), իսկ ամենացածրը՝ արդյունաբերության (1 տոկոս): 2023 թ. Եռ.1-ում գյուղատնտեսության ոլորտում գրանցվել է 2 տոկոս աճ, ինչը պայմանավորված է այգեգործության

ոլորտի վերականգնմամբ, իսկ անասնապահության և ձկնաբուծության ծավալները կրճատվել են:

Հունիսին Ռուսաստանից դրամական զուտ փոխանցումները 33 տոկոսով պակաս են եղել 2022 թ. հունիսի փոխանցումներից, բայց երեք անգամ գերազանցել են 2021 թ. հունիսի ցուցանիշը: Զուտ արտահայտությամբ՝ 2023 թ. հունիսին դրամական փոխանցումները կազմել են 130 միլիոն ԱՄՆ դոլար, ինչը 2.7 անգամ գերազանցում է մայիսի ցուցանիշը, բայց 15 տոկոսով ցածր է անցած հինգ ամիսների միջինից: Դրամական փոխանցումների ներհոսքերում ու արտահոսքերում նկատվում են զգալի տատանումներ (պատկեր 2):

Անշարժ գույքի գները համադրելի են եղել 2022 թ. մակարդակին՝ չնայած փոքրաթիվ գործարքների: Երևանի կենտրոնում բնակարանների գները հունիսին շարունակել են բարձրանալ, իսկ բնակարանների հետ կապված գործարքների թիվը պակասել է 40 տոկոսով (ՆՏՏՀ): Երևանում բնակարանների վարձակալության ցուցանիշը մի փոքր բարելավվել է մայիսին և հունիսին՝ թերևս պայմանավորված զբոսաշրջային սեզոնով:

Հունիսին և հուլիսին գրանցվել է գների աննշան անկում, համապատասխանաբար, 0.5 և 0.1 տոկոս (ՆՏՏՀ), ինչի պատճառով հուլիսին միջին գնաճը հասել է 3.6 տոկոսի (պատկեր 3): Սպառողական գների ընդհանուր համաթվի նվազումը հիմնականում պայմանավորված էր սննդամթերքի գների (3.9 տոկոս), տրանսպորտի (1.7 տոկոս) և հաղորդակցության (0.5 տոկոս) գների անկմամբ: Գնաճի կտրուկ անկումը պայմանավորված էր արտաքին ինֆլյացիոն ցածր ճնշումներով, իսկ ստորադրամավարկային քաղաքականությամբ և ՀՀ դրամի շարունակական ամրապնդմամբ, ինչպես նաև մի շարք բազային ազդեցություններով: Օգոստոսի 1-ին Կենտրոնական բանկն իր խորհրդի նիստում վերաֆինանսավորման դրույքը իջեցրեց 25 բազիսային կետով՝ հասցնելով 10.25 տոկոսի:

Առևտրային հաշվեկշռի բացասական սալոն 2023 թ. հունիսին կրկնապատկվեց (ՆՏՏՀ) հասնելով 454 միլիոն ԱՄՆ դոլարի: Դա պայմանավորված էր ապրանքների արտահանման նշանակալի դանդաղմամբ՝ մայիսի 65 տոկոս ցուցանիշից (ՆՏՏՀ) հասնելով 2.5 տոկոսի՝ հունիսին: Արտահանման ծավալների աճը ևս դանդաղել է՝ մայիսի 54 տոկոսից իջնելով մինչև 34 տոկոս հունիսին: Տրանսպորտային միջոցների և մեքենասարքավորումների (հիմնականում՝

վերաարտահանվող ապրանքներ) արտահանումը շարունակել է աճել արտասովոր տեմպով (համապատասխանաբար՝ 11 և 3 անգամ): Բայցևայնպես, թանկարժեք մետաղների արտահանումը, որը նախորդ ժամանակամիջոցներում զգալի մասնաբաժին է ունեցել ընդհանուր արտահանման կազմում, կրճատվել է 46 տոկոսով (ՆՏՏՀ): Սա՝ օգտակար հանածոների, գյուղատնտեսական ու պարենային արտադրատեսակների արտահանման ծավալների նվազման հետ մեկտեղ չեզոքացնում է այլ հիմնական ապրանքատեսակների արտահանման աճը: 2023 թ. Եռ 1-ում արտահանման և ներմուծման ծավալներն աճել են 73 տոկոսով (ՆՏՏՀ): 2023 թ. H1-ում զբոսաշրջային ժամանումների թիվն ավելացել է 70 տոկոսով (ՆՏՏՀ)՝ հասնելով մեկ միլիոնի, որի 50 տոկոսն ապահովել է Ռուսաստանը:

Հունիս-հուլիսին ՀՀ դրամը համեմատաբար կայուն է մնացել ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ: Մինչ ռուբլին շարունակում է արժեզրկվել, հուլիսի վերջին ՀՀ դրամը ռուբլու նկատմամբ ամրապնդվել է 36 տոկոսով (ՆՏՏՀ) (պատկեր 4): Միջազգային պահուստները հուլիսին ավելացել են 232 միլիոն ԱՄՆ դոլարով. դրան մասամբ նպաստել է Հա,աշխարհային բանկի 100 միլիոն ԱՄՆ դոլար արժողությամբ բյուջետային աջակցության վարկը: Դրա շնորհիվ հուլիսի վերջին միջազգային պահուստները հասել են նոր ռեկորդի՝ 4.1 միլիարդ ԱՄՆ դոլար, որը համարժեք է 4.3 ամսվա ներմուծման ծածկույթի (պատկեր 5):


Հունիսին գրանցվել է բյուջեի 34 միլիարդ ՀՀ դրամ լրացուցիչ հավելուրդ, որը պայմանավորված է հարկային մուտքերի հավաքագրման 15.4 աճով (ՆՏՏՀ): Սա պայմանավորված է ԱԱՀ-ի և եկամտահարկի հավաքագրումների, համապատասխանաբար, 15 և 43 տոկոս աճով և բացատրվում է սպառման ավելի մեծ ծավալներով, ավելի բարձր տնտեսական արդյունքներով և եկամտային հարկի հավաքագրման ցուցանիշի 20 տոկոս աճով: Ընթացիկ և կապիտալ ծախսերը ևս ավելացել են՝ համապատասխանաբար 12 և 18 տոկոսով ՆՏՏՀ: Հանրագումարում՝ ի տարբերություն 2023 թ. H1-ի բյուջեի պլանի, եկամուտները 6 տոկոսով գերազանցել են սպասելիքները, իսկ ընթացիկ և կապիտալ ծախսերը թերակատարվել են, համապատասխանաբար, 6 և 46 տոկոսով՝ ներդրումների համար ծրագրված մեծ ու հավակնոտ բյուջեի ֆոնին: Արդյունքում՝ H1-ում բյուջետային

հավելուրդը կազմել է 135 միլիարդ ՀՀ դրամ՝ ի տարբերություն 93 միլիարդ ՀՀ դրամ պլանային պակասուրդի:

Հունիսին բանկային վարկերի և ավանդների աճը թուլացել է, բայց ֆինանսական ցուցանիշները մնացել են կայուն: Փոխարժեքի ճշգրտմամբ՝ հունիսին վարկերն ու ավանդներն ավելացել են, համապատասխանաբար, 2 և 0.7 տոկոսով (նախորդ ամսվա համեմատ): Կապիտալի համարժեքության գործակիցները պահպանվել են կայուն՝ 20.5 տոկոս մակարդակում: Չաշխատող վարկերի մասնաբաժինը հունիսին ավելացել է՝ հասնելով 2.9 տոկոսի, ապրիլի 2.5 տոկոսի համեմատ, թեև պահպանվել է կառավարելի մակարդակում: Գույքի եկամտաբերությունը երեք ամիս անընդմեջ պահպանվել է հաստատուն՝ 2.7 տոկոս մակարդակում:


Գծապատկեր 1. Արդյունաբերության ոլորտի թողարկման ծավալները հունիսին կրճատվել են, իսկ ծառայությունների աճի տեմպն էականորեն ընկել է

(Տնտեսական ակտիվության ցուցանիշ, փոփոխությունը (ԱՄՆ դոլար) ՆՏՆԺՀ, %)



Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե


Գծապատկեր 2. Դրամական փոխանցումների ներհոսքերն ու արտահոսքերը հունիսին աճել են՝ առանց հստակ միտման



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

Գծապատկեր 3. Հունիսին Հայաստանում արձանագրվել է գնանկում, իսկ հուլիսին գները կայունացել են


(ՍԳՀ գնաձ, ՆՏՆԺՀ, փոփոխություն, %)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

Գծապատկեր 4. ՀՀ դրամը հաստատուն է եղել ԱՄՆ դոլարի նկատմամբ, սակայն արժևորվել է ռուբլու նկատմամբ

(ինդեքս. 2020 թ. մարտի 2 = 100)




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

Գծապատկեր 5. Միջազգային պահուստները հուլիսին ավելացել են և մի փոքր գերազանցել են 2022 թ. տարեվերջի մակարդակը


(միլիոն ԱՄՆ դոլար)
(ներմուծման ամիսներ)

Գծապատկեր 6. Բյուջեի հաշվեկշռում 2023 թ. Ե1-ում գրանցվել է հավելուրդ

(միլիարդ ՀՀ դրամ)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ